

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

2007Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ՆԵՐԱՌՈՒՄԷ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԴԵՄՉԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007թ. մայիսի 12-ի ընտրությունների նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) սահմանված կարգով և ժամկետներում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի համաձայն Հանրապետության Նախագահը 2007թ. հունվարի 29-ին հրապարակել է հրամանագիր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություններ նշանակելու մասին, հրամանագիրն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակվել է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում և մտել ուժի մեջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում ընդունել է ընտրական գործընթացների կանոնակարգման համար անհրաժեշտ բոլոր իրավական ակտերը, որոնք «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակվել են Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում և մտել ուժի մեջ: Ընդունված որոշումներն առանձին գրքույկի տեսքով տպագրվել և տրամադրվել են ընտրական հանձնաժողովների անդամներին:

Սահմանված ժամկետում և կարգով կազմավորվել են բոլոր 1923 ընտրական տեղամասերը և տեղամասային կենտրոնները, ձևավորվել տեղամասային ընտրական հանձնաժողովները, ընտրվել հանձնաժողովների նախագահներ, տեղակալներ և քարտուղարներ:

Ընտրողները ծանուցվել են քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին: Ծանուցագրեր ուղարկելու միջոցով ընտրողների ծանուցման ինստիտուտն առաջին անգամ էր կիրառվում և դրանով պայմանավորված՝ որոշ դեպքերում ծանուցագրերում եղել են ոչ ճիշտ տեղեկություններ քվեարկության տեղի մասին: Սակայն այն չի հանգեցրել ընտրողների անորոշության, առավել ևս ընտրական իրավունքների ոտնահարման, քանի որ բոլոր տեղամասերում սահմանված կարգով փակցված են եղել ընտրողների ցուցակները, տեղամասային կենտրոնները կազմավորվել են իրենց ավանդական

վայրերում, իսկ ոչ ճիշտ տեղեկություններ պարունակող ծանուցագրերի հայտնաբերման պարագայում ուղարկվել են կրկնակի՝ ճշգրիտ տեղեկություններով ծանուցագրեր:

Ընտրողներն ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների մասին տեղեկացվել են նաև համայնքների ղեկավարների կողմից՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 22.06.05թ. թիվ 15-Ն և 01.02.07թ թիվ 1-Ա որոշումներով սահմանված կարգով և ժամկետներում:

Ընտրողների ցուցակները՝ ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի և պայմանների մասին կից տեղեկանքներով, սահմանված ժամկետներում փակցվել են տեղամասային կենտրոններում, հատկացվել ընտրական հանձնաժողովներին, տեղադրվել կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ նաև ըստ տեղամասերի:

Ընտրողների ցուցակների ճշգրտման համար օրենսգրքով սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության ոստիկանության և կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքի, կուսակցությունների, թեկնածուների, քաղաքացիների ակտիվության շնորհիվ ցուցակների ճշգրտման արդյունքում ընտրողների թիվը նվազել է մոտ 40.000-ով, այդ թվում՝ ցուցակներից հանվել է 9.607 մահացածի անուն-ազգանուն: Դճգրտված ցուցակները ևս զետեղվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության և այդ գործում ներգրավված մյուս պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների արդյունքում քվեարկության օրն իր ընտրական իրավունքը վերականգնել է ընդամենը 1906 ընտրող կամ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների 0,082 %-ը:

Պասիվ ընտրական իրավունքն իրականացրել են համամասնական ընտրակարգով առաջադրված 22 կուսակցություն, կուսակցությունների մեկ դաշինք և նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիները, ինչպես նաև մեծամասնական ընտրակարգով առաջադրված բոլոր քաղաքացիները՝ բացառությամբ թիվ 19 ընտրատարածքում որպես թեկնածու գրանցված երկու քաղաքացու, որոնց գրանցումն ուժը կորցրած է ճանաչվել դատական կարգով՝ ոչ ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Փաստն արձանագրել և բարձր են գնահատել նաև միջազգային դիտորդական առաքելությունները: Այս ընտրություններն առանձնահատուկ էին նաև դրանով:

Ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացվել է 76 դիմում-բողոք (այսուհետ՝ դիմում):

Դիմումներից 40-ը վերաբերում են նախընտրական քարոզչության կազմակերպմանն ու անցկացմանը, դրանցից 21-ը՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ՁԼՄ-ների կողմից նախընտրական քարոզչության լուսաբանմանը, 2 դիմում՝ նախընտրական հիմնադրամներին:

Թեկնածուների գրանցման գործընթացի, ինչպես նաև թեկնածուների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով ներկայացվել է 5 դիմում: 6 դիմում վերաբերել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպմանը, տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորման գործընթացին, հանձնաժողովների անդամների գործունեությանը, 6-ը՝ ընտրողների ցուցակների կազմմանը, դրանցում առկա անճշտություններին, ընտրողների ցուցակում ընդգրկելուն կամ ցուցակից հանելուն, ընտրողներին ծանուցելուն, 7-ը՝ քվեարկության կազմակերպմանն ու անցկացմանը: Ներկայացվել են նաև դիմումներ հանձնաժողովում առկա ընտրական փաստաթղթերին ծանոթանալու և այլնի մասին:

Օրենսգրքի 40.1-րդ հոդվածը սահմանում է ընտրական հանձնաժողովների կողմից դիմումների քննարկման կարգը:

Ստացված բոլոր դիմումները օրենսգրքով սահմանված կարգով քննության են առնվել և սահմանված ժամկետներում պատասխանվել, երկու դեպքում հանձնաժողովն ընդունել է համապատասխան որոշում:

Ստորև ներկայացվում է որոշ խումբ դիմումներում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ:

Կուսակցությունների՝ մինչև նախընտրական քարոզչության սկսվելը, գործունեության մասին

Մինչև նախընտրական քարոզչության օրենսդրությամբ սահմանված պաշտոնական մեկնարկը կուսակցությունները, օգտվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընձեռած հնարավորություններից, օրենսդրությամբ սահմանված կարգով ազատ տարածել են տեղեկություններ իրենց գործունեության վերաբերյալ, քարոզել իրենց նպատակները և խնդիրները:

Կուսակցությունների այս գործունեությունը, եթե նույնիսկ այն պարունակել է քարոզչության տարրեր, չի կարող նույնացվել նախընտրական քարոզչության հետ: Միայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում է, որ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության ամենօրյա նախընտրական քարոզչությունը ենթարկվում է օրենքով նախատեսված որոշակի կանոնակարգման՝

սահմանափակումների կամ ընտրական գործընթացով պայմանավորված արտոնությունների:

Նախընտրական քարոզչությունը որպես իրավական երևույթ կարող է գոյություն ունենալ միայն նախընտրական քարոզչության փուլում, որի ժամանակահատվածը հստակ և աներկբա սահմանված է օրենսգրքով: Քաղաքացիների, կուսակցությունների կողմից մինչև նախընտրական քարոզչության փուլի սկսվելն իրականացվող տեղեկատվություն տարածելու գործունեությունը, եթե նույնիսկ այն ունի նախընտրական քարոզչության նշաններ, չի կարող համարվել նախընտրական քարոզչություն:

Քաղաքական քարոզչությունը կամ քաղաքական գովազդը, ինչպես էլ որ մեկնաբանվեն, միևնույն է, օրենսգրքի իմաստով նախընտրական քարոզչություն չեն, քանի որ չկա սուբյեկտը, այն է՝ թեկնածուն:

Ընտրությունների մասնակից որոշ կուսակցություններ բողոքում էին գովազդային վահանակների՝ այլ կուսակցությունների կամ կազմակերպությունների կողմից զբաղեցված լինելու հանգամանքից:

Այդ գովազդային վահանակները պատկանում են տարբեր ընկերությունների, որոնց հետ հարաբերություններն օրենսդրությամբ այլ կարգավորման բացակայության պատճառով հիմնված են պայմանագրի ազատության սկզբունքի վրա, և պայմանագրային հարաբերությունների առկայությունը բացառում է նոր պայմանագրային հարաբերությունների ձևավորումը դիմումատուի հետ՝ պայմանավորված պայմանագրային առարկայի բացակայությամբ:

Քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքների ղեկավարները յուրաքանչյուր տեղամասի համար առանձնացրել են հատուկ տեղեր՝ թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի համար ապահովելով հավասար մակերես:

Չանգվածային լրատվության միջոցների գործունեության մասին

ԶԼՄ-ների իրավունքներն ու պարտականությունները, գործունեության երաշխիքները սահմանված են «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ նախընտրական քարոզչության ընթացքում նրանց գործունեության առանձնահատկությունները սահմանված են օրենսգրքի 20-րդ հոդվածով, համաձայն որի ԶԼՄ-ները լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացնեն անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն:

ԶԼՄ-ների կողմից նշված պարտականությունները պատշաճ կատարելու համար անհրաժեշտ է, որ նրանք ունենան անցկացվող միջոցառումների տեղի և ժամանակի մասին տեղեկատվություն՝ լուսաբանումը կազմակերպելու համար:

Նախընտրական քարոզչության փուլում կուսակցություններն իրենց քարոզչական միջոցառումները շատ դեպքերում անց են կացրել հանպատրաստի, առանց այդ մասին նախնական իրազեկման: Այդ են փաստել նաև դիտորդական առաքելություն իրականացրած միջազգային դիտորդներն իրենց թիվ 3 միջանկյալ զեկույցում, արձանագրելով՝ «կուսակցությունների մեծ մասը նախընտրում է չհայտարարված կամ մի քանի ժամ առաջ հայտարարված ցույցեր անցկացնելու մոտեցումը», կամ որ այդ հանդիպումները մեծամասամբ կրել են «հանպատրաստից» բնույթ:

Օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն հեռուստառադիոընկերությունները պարտավոր են հավասար պայմաններ ապահովել ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար:

Արդյո՞ք «հավասար» բառը պետք է հասկանալ բացարձակ իմաստով: Հարցի պատասխանը տրված է Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» 2.3 կետում, որտեղ մասնավորապես ասվում է՝ «Կախված խնդրո առարկայից հավասարությունը կարող է լինել «խիստ» կամ «համամասնական»: ... Հնարավորությունների հավասարությունը վերաբերվում է մասնավորապես ռադիո և հեռուստատեսության եթերաժամերի տրամադրմանը, հանրային ֆոնդերին և օժանդակման այլ ձևերին:»:

ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզարշավի բոլոր մասնակիցները, քարոզարշավի մեկնարկի սկզբին՝ 2007թ. ապրիլի 8-ին, գտնվել են «խիստ» հավասարության պայմաններում:

Հետագայում հավասարությունը պայմանավորված է եղել նախընտրական քարոզարշավի մասնակիցների կողմից իրականացվող միջոցառումների ինտենսիվությունից, քարոզարշավի աշխարհագրությունից, ներկայացվող ծրագրերի ու նպատակների նկատմամբ հասարակության հետաքրքրությունից և ժամանակի ընթացքում հասարակության մեջ այդ հետաքրքրության աճից կամ նվազումից:

Հավասարության սկզբունքը կիրառելիս հաշվի է առնվել հանրային հետաքրքրությունը, քարոզչության ինտենսիվությունը, քարոզչության ձևերն ու մեթոդները, կազմակերպվող միջոցառումների մասին պատշաճ իրազեկումը:

Ինչ վերաբերում է առանձին հեռուստաընկերությունների առանձին հեղինակային հաղորդումներին այս կամ այն կուսակցության ներկայացուցչին հրավիրելու կամ չհրավիրելու հանգամանքներին, ապա «Չանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն արգելում է զանգվածային լրատվության միջոցի

նկատմամբ տեղեկատվություն տարածելուն կամ այն տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող որևէ հարկադրանք կիրառելը:

Հեռուստաընկերություններն ու ռադիոընկերություններն իրենք են որոշում իրենց հաղորդումների բովանդակությունը, ինչով էլ օրենքը երաշխավորել է նրանց խմբագրական և ստեղծագործական անկախությունը և տարբերակել հեղինակային հաղորդումները վճարովի գովազդից:

Եվրախորհրդի նախարարների կոմիտեի «ՁԼՄ-ներով նախընտրական քարոզչության լուսաբանումն ապահովելու միջոցների մասին» R (99) 15 երաշխավորության 5-րդ կետում նշվում է, որ վճարովի գովազդի դեպքում է, որ հաղորդումը պարտադիր պետք է ուղեկցվի այդ մասին համապատասխան լուսագրով:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ հեղինակային կամ լրատվական-տեղեկատվական ծրագրերում քարոզչության ընթացքում ներկայացվածը չի կարող համարվել վճարովի հիմունքներով եթերաժամանակ և հաշվարկվել նախընտրական հիմնադրամի ծախսերում:

Նախընտրական քարոզչության համար դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու մասին

Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Պետությունն ապահովում է քաղաքացիների նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Նախընտրական քարոզչությունն իրականացվում է հավասար հիմունքներով: Այն ապահովում են պետական մարմինները՝ ընտրական հանձնաժողովների պահանջով՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք ընտրություններին մասնակցող թեկնածուներին ու կուսակցություններին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցով եւ կարգով»:

ԿԸՀ-ի 2005թ. օգոստոսի 3-ի որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մարմինները, համապատասխան ԸԸՀ-ի պահանջով՝ նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հավասար հիմունքներով, անվճար տրամադրում են դահլիճներ և այլ շինություններ:

Միջոցառման կազմակերպիչը պետք է համապատասխան միջոցառումից առնվազն 5 օր առաջ այդ մասին դիմում ներկայացնի համապատասխան ԸԸՀ-ին:

Օրենսգրքի նշված հոդվածից և կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումից ակնհայտ է, որ տեղական ինքնակառավարման մարմինները որևէ պարտականություն չունեն կուսակցությունների և թեկնածուների պահանջով վերջիններիս դահլիճներ տրամադրել: Նման պարտականություն ունեն միայն պետական մարմինները, այն էլ միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի պահանջով:

Առկա չէ որևէ մեկ դեպք, երբ սահմանված կարգով ԸԸՀ-ին դիմելուց հետո պետական մարմինների տնօրինության տակ գտնվող դահլիճները չեն տրամադրվել քարոզարշավին մասնակից թեկնածուներին, կուսակցություններին:

Օրենսգրքի 22.1 հոդվածով սահմանված սահմանափակումների վերաբերյալ

Նախընտրական քարոզչության ընթացքում հավասարության սկզբունքի ապահովման նպատակով քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, քաղաքացիական, տեղական ինքնակառավարման մարմինների ծառայող հանդիսացող թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզչության համար սահմանվել են որոշակի սահմանափակումներ:

Այս խումբ պաշտոններ զբաղեցնող թեկնածուներն իրենց նախընտրական քարոզչությունը կազմակերպում են այն եղանակներով ու կարգով, ինչ մյուս թեկնածուները՝ հաշվի առնելով օրենսգրքի 22.1 հոդվածում ամրագրված սահմանափակումները: Ըստ այդ հոդվածի՝ «Արգելվում է նախընտրական քարոզչության իրականացումը պաշտոնական պարտականությունները կատարելիս կամ պաշտոնական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար»:

Այս դեպքում անհրաժեշտ է տարբերակել և չնույնացնել «պաշտոնական պարտականություններ» և «աշխատանքային ժամեր» հասկացությունները:

Պաշտոնատար անձինք իրենց պաշտոնական պարտականություններն իրականացնում են աշխատանքային ժամերին, սակայն դա չի բացառում, որ պաշտոնատար անձն իր պաշտոնական պարտականություններն իրականացնի նաև ոչ աշխատանքային ժամերին:

Եթե պաշտոնատար անձը ոչ աշխատանքային ժամին հանձնարարականներ է տալիս կամ հրավիրում է խորհրդակցություն, ապա այդ ժամանակ ևս իրականացնում է պաշտոնական պարտականություններ: Եվ հակառակը, եթե աշխատանքային ժամին պաշտոնատար անձը, օրինակ, նոտարիատում կնքում է որևէ քաղաքացիաիրավական պայմանագիր, ապա վերջինս չի գտնվում իր պաշտոնական պարտականությունների կատարման մեջ:

Պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները վերջինիս Սահմանադրությամբ և օրենքով վերապահված լիազորություններն են, որոնք նա պարտավոր է կատարել: Սահմանադրությամբ և օրենքով չնախատեսված որևէ այլ գործունեություն, իրականացվի դա աշխատանքային ժամերին, թե դրանից դուրս, չի կարող համարվել պաշտոնական պարտականությունների կատարում և հակառակը՝ պաշտոնատար անձի Սահմանադրությամբ և օրենքով վերապահված ցանկացած լիազորության իրականացում, անկախ այն հանգամանքից, իրականացվում է այն աշխատանքային ժամերին, թե ոչ, պետք է համարել պաշտոնական պարտականությունների կատարում:

Նախընտրական քարոզչության ֆինանսավորման մասին

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն նախընտրական քարոզչության համար կարող են ծախսվել բացառապես նախընտրական հիմնադրամի միջոցները:

Ընտրություններին մասնակցող այն կուսակցությունները, կուսակցությունների դաշինքը և թեկնածուները, ովքեր կատարել են նախընտրական քարոզչության համար ծախսեր, սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ:

ՀՀ կենտրոնական բանկը և ԿԸՀ-ի սահմանած մյուս առևտրային բանկերն օրենսգրքով սահմանված պարբերականությամբ հանձնաժողով են ներկայացրել տեղեկություններ հիմնադրամներում կատարված մուծումների և այդ հաշիվներից իրականացված ծախսերի մասին:

Նախընտրական քարոզչության փուլում ընտրություններին մասնակցող կուսակցությունները շարունակում են իրենց՝ որպես կուսակցություն, բնականոն գործունեությունը, որի ֆինանսավորումը նախընտրական հիմնադրամների միջոցներից կատարելու պարտականություն կամ որևէ պահանջ օրենսգիրքը չի սահմանում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օրենսգրքի և «Նախընտրական հիմնադրամներում կատարվող կամավոր մուծումների, նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու, նախընտրական հիմնադրամների և ընտրական գրավների հետ կապված գործավարության կարգը, նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի և նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով առաջադրված թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների առաջադրման փաստը հավաստող տեղեկանքի ձևը սահմանելու մասին» 03.08.2005թ. թիվ 37-Ն որոշման պահանջներին համապատասխան, հանձնաժողովի 2007թ. փետրվարի 1-ի թիվ 27-Ն որոշմամբ ստեղծված՝ կենտրոնական

ընտրական հանձնաժողովին առընթեր վերահսկիչ-վերստուգիչ ծառայության միջոցով իրականացրել է իր գործառույթները:

Մասնավորապես, համապատասխան բանկերից պահանջել և ստացել է անհրաժեշտ տեղեկություններ, տեղեկանքներ՝ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմանդրամներ կատարվող մուծումների և ծախսերի վերաբերյալ,

ուսումնասիրել է ստացված տեղեկությունների համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, վարել դրանց վերաբերյալ համապատասխան գործավարություն,

թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմանդրամներ կատարվող մուծումների և ծախսերի վերաբերյալ կազմել տեղեկանքներ և դրանք զետեղել կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում,

կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի՝ նախընտրական հիմանդրամներ կատարված մուծումների և իրականացված ծախսերի մասին հայտարարագրերն ամփոփել և դրանք զետեղել կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում:

Նաև՝ հանձնաժողովն իր նիստում լսել է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից ընտրությունների մասնակիցների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման մասին հայտարարագրերի ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Բարեգործական ծրագրերի մասին

Մինչև նախընտրական քարոզչության սկիզբը կուսակցությունները կարող են իրականացնել բարեգործական ծրագրեր, քանզի նման օրենսդրական արգելք գոյություն չունի: Չնայած օրենսդրական արգելքի բացակայությանը, մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կուսակցություններն ընդամենը աջակցել են բարեգործական կազմակերպությունների կամ անհատ քաղաքացիների միջոցների հաշվին բարեգործական ծրագրերի իրականացմանը: Բարեգործական կազմակերպությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի կանոնակարգումների, չեն կարող նույնացվել կուսակցությունների հետ:

Բերվածի և նախընտրական քարոզչությանը վերաբերող մի շարք այլ հարցերի վերաբերյալ առկա են նաև առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներ:

Քվեարկության կազմակերպման մասին

Քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներն իրականացրել են իրենց վրա դրված բոլոր պարտականությունները՝ օրենսգրքով և ԿԸՀ որոշումներով սահմանված կարգով և ժամկետներում:

Մայիսի 12-ին՝ ժամը 8:00-ին բացվել են բոլոր 1923 ընտրական տեղամասերը, սկսվել է քվեարկությունը:

Արդեն երրորդ ընտրությունն է, որ քվեարկությունը կազմակերպվում է միասնական մոնոլի քվեախցիկներով: Քվեախցիկների այդ ձևին անցնելը նպատակ է հետապնդում կանխելու նախորդ ընտրությունների ժամանակ նկատված մի շարք թերություններ՝ այսպես կոչված «կարուսելը», քվեաթերթիկ լուսանկարելը, մեկից ավելի ընտրողի մուտքը քվեախցիկ և այլն: Քվեախցիկների այս մոդելն օգագործվում է նաև այլ երկրներում, իսկ արգելափակիչ ժապավենների օգտագործումը բարձրացրել է քվեարկության գաղտնիության ապահովման աստիճանը:

Ընդհանուր առմամբ քվեարկությունն անցել է խաղաղ, առանց լուրջ միջադեպերի: Հանրապետությունում հանցագործությունների աճ կամ քրեածին իրավիճակի սրում, պայմանավորված նախընտրական գործընթացներով, չի արձանագրվել: Ինչպես նշվել է նաև միջազգային դիտորդական առաքելության 2007թ. մայիսի 12-ի գեկույցում, «Ռոշ բռնության դեպքեր տեղի ունեցան քարոզարշավի ընթացքում, որոնք կարծես թե զգալի ներգործություն չունեցան ողջ ընտրական մթնոլորտի վրա: Ընտրությունների օրը քվեարկությունն անցավ հիմնականում հանգիստ միջավայրում»:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են մեծ ծանրաբեռնվածությամբ, նաև ընտրողների ակտիվության պատճառով երբեմն առաջացել են հերթեր, սակայն չի գրանցվել որևէ դեպք, որ այս պատճառով խոչընդոտվի ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և որևէ ընտրող այդ պատճառով զրկվի ընտրական իրավունքից:

Գունավոր գրիչների մասին

Օրենսգիրքն ընտրողին միայն պարտադրում է քվեաթերթիկում ԿԸՀ կողմից սահմանված կարգով միատեսակ նշում կատարել և չի արգելում օգտագործել տարբեր գույների՝ գնդիկավոր կամ այլ գրիչներ: Կարևորը, որ քվեարկության խցիկներում տեղադրված են եղել գրիչներ և որ ընտրողն ունեցել է հնարավորություն ընտրելու թե որ գրիչով իրականացնի իր կամքի ազատ արտահայտումը:

Վստահված անձանց կողմից իրենց իրավունքների իրականացման մասին

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վստահված անձանց իրավունքների սահմանափակման վերաբերյալ դիմումներ չեն ստացվել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում վստահված անձանց կողմից ներկայացված դիմումները չգրանցելու մասին ևս որևէ բողոք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները չեն ստացել:

Գործնականում, սակայն, չի բացառվում, որ հանձնաժողովների անդամների և վստահված անձանց միջև եղած լինեն տարաձայնություններ, նույնիսկ կոնֆլիկտային իրավիճակներ՝ օրենսգրքի տարբեր դրույթների բովանդակության կամ դրանց կիրառման վերաբերյալ, որոնք հենց տեղում հարթված լինեն:

Քվեարկության արդյունքների ամփոփման մասին

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր 1923 ընտրական տեղամասերը և հանձնաժողովներն օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները, օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 10 ժամվա ընթացքում, ավարտել են թե՛ համամասնական և թե՛ մեծամասնական ընտրակարգով քվեարկությունների արդյունքների ամփոփումը:

Պետք է հաշվի առնել, որ ընտրական տեղամասերում մեկ քվեարկության արդյունքների ամփոփման համար օրենսգրքով սահմանված ժամկետում միաժամանակ ամփոփվել է երկու քվեարկության արդյունք, ինչի պատճառով հանձնաժողովներն աշխատել են ծանրաբեռնված, որն առանձին դեպքերում հանգեցրել է օրենսգրքի ընթացակարգային որոշ նորմերի չպահպանմանը, թերացումների:

Թերացումները հիմնականում տեխնիկական բնույթ են կրել՝ թվաքանակային սխալներ, թվերով և տառերով գրված տվյալների անհամապատասխանություն կամ նմանատիպ այլ բացթողումներ, բայց ոչ մի դեպքում թեկնածուների կամ կուսակցությունների օգտին կողմ քվեարկած քվեաթերթիկների մասով, և չէին կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում կազմված քվեարկության արդյունքների ամփոփման մասին արձանագրություններում թերացումները հիմնականում վերաբերում են տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեարկության ծրարների և քվեաթերթիկների թվերին, քվեաթերթիկների ելունդների համարներին:

Արձանագրություններում յուրաքանչյուր կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին, թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը, անվավեր

քվեաթերթիկների թիվը, ընտրողների ընդհանուր թիվը՝ ըստ ընտրացուցակների, գրանցված և քվեաթերթիկներ ստացած ընտրողների թիվը, մարված քվեաթերթիկների թիվը տողերում լրացված տվյալները փոփոխություններ չեն կրել:

Օրենսգրքի 63 հոդվածի համաձայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, և թվաքանակյա սխալների առկայության դեպքում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններում թվաքանակյա և ոչ ելակետային տվյալների սխալները վերացվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների /տեղակալների/ և /կամ/ քարտուղարների կողմից և վավերացվել նրանց ստորագրություններով ու տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով: Տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում ընտրական փաստաթղթերի հանձնման հերթերի գոյացման, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների գերծանրաբեռնվածության և այլ պատճառներով կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված արձանագրություններում առկա են եղել որոշ բացթողումներ, թերացումներ, թվաքանակյա սխալներ:

Դեկավարվելով օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից կազմված ընտրական փաստաթղթերի հանձնման և ընդունման ստացականները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված քվեաթերթիկների և քվեարկության ծրարների, ինչպես նաև քվեաթերթիկների ելունդների համարների վերաբերյալ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցությամբ վերացվել են անհամապատասխանությունները «հանձնաժողովին հատկացված քվեարկության ծրարների թիվը», «հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը», «ելունդների համարները» տողերում և վավերացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կնիքով:

Ինչ վերաբերում է «կողմ քվեարկած քվեաթերթիկների ընդհանուր թիվը», «վավեր քվեաթերթիկների թիվը» և «անճշտությունների չափը» տողերին, ապա դրանք ստացվում են ելակետային թվերի մաթեմատիկական գործողությունների արդյունքում: Այդ թվերը հաշվարկվել են համակարգչային եղանակով՝ «Ընտրություններ ավտոմատացված

համակարգ» ծրագրի օգնությամբ, և համակարգչի միջոցով ճշգրտված տվյալներն են ներառվել քվեարկության արդյունքների վերջնական արձանագրությունում:

Օրենսգրքի 63.2-րդ հոդվածի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների հիման վրա, հիմք ընդունելով նաև դատարանների վճիռներն ու ընտրատարածքներում կատարված վերահաշվարկների արդյունքները, ամփոփում է համապետական ընտրությունների արդյունքները և արձանագրությամբ վավերացնում դրանք:

Իրավանդորմում նշված «ամփոփում» դրույթը չունի իր օրենսդրական բնորոշումը:

Ամփոփում իրականացնելով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ստացված տվյալները բերում է հանրագումարի, սակայն դրանցում բացահայտ անճշտություններ, վրիպակներ, բացթողումներ և նմանատիպ այլ թերություններ հայտնաբերելու պարագայում չի կարող ցուցաբերել մեխանիկական մոտեցում. հանձնաժողովն ամփոփում է քվեարկության բուն պատկերը և ոչ թե ստացված թվերի մեխանիկական հանրագումարը:

Բացարձակ մեկնաբանման պարագայում կստացվի, որ, օրինակ, ամենաիդեալական ընտրության պարագայում ընդամենը մեկ ընտրական տեղամասում կազմված արձանագրությունում կարելի է այնպիսի թվաբանական սխալ արձանագրել (օրինակ՝ 1 մլրդ անճշտություն), որն ինքնին անվավեր կդարձնի ցանկացած ընտրություն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, այո՛, կատարվել են որոշ ճշտումներ, սակայն դրանք չեն փոխել քվեարկության արդյունքները (ընտրության պատկերը), այլ ճշգրտվել են մեխանիկական կամ թվաբանական թերությունները:

Նրանց, ովքեր բերում են արձանագրությունների արդյունքների վերաբերյալ վերլուծություններ և անում եզրակացություններ՝ կապված քվեաթերթիկների, քվեարկության ծրարների անհետացման, ավելացման, ընտրողների ստորագրությունների ավել կամ պակաս լինելու հետ, խնդրում ենք զերծ մնալ ոչ հիմնավոր եզրակացություններից և մեկ անգամ ևս ընթերցել օրենսգիրքը և ԿԸՀ որոշումները:

Բերված բոլոր տվյալների անհամապատասխանություններն արտացոլված են տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների արձանագրությունների և այդ արձանագրությունների աղյուսակավորման մեջ՝ անճշտությունների չափը տողում, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրության «անճշտությունների չափը» տողում, որն այս ընտրությունների դեպքում կազմում է 14.665:

Օրենսգիրքն ամրագրում է, որ չսահմանված նմուշի ծրարում գտնվող, սահմանված նմուշի քվեարկության ծրարում մեկից ավելի, քվեատուփում գտնվող առանց

քվեարկության ծրարի քվեաթերթիկները համարվում են չսահմանված նմուշի, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ չսահմանված նմուշի քվեարկության ծրարները և չսահմանված նմուշի քվեաթերթիկները չեն հաշվարկվում, և դրանց վերաբերյալ արձանագրություն չի կազմվում: Այս ամենն էլ հենց դառնում է անճշտությունների առաջացման պատճառ:

Որոշ տեղամասային ընտրական հանձնաժողովներ, այո՛, թերացել են ընտրական փաստաթղթերի փաթեթավորման գործում, որի արդյունքում դրանք սահմանված կարգով չեն ներկայացվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ:

Այս հանգամանքներն արձանագրվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից, սակայն դրանք ազդեցություն չէին կարող ունենալ ընտրություններին մասնակից թեկնածուների օգտին տրված քվեների վրա և դրանով չէր կարող խախտվել նրանց պասիվ ընտրական իրավունքը:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին

Արձանագրություններում կատարված գրառումների համաձայն հատուկ կարծիք ցանկացել են ներկայացնել հանձնաժողովների ընդամենը 22 անդամ՝ թվով 19 տեղամասային ընտրական հանձնաժողովներում, սակայն որևէ հատուկ կարծիք արձանագրություններին չի կցվել, և այդ հատուկ կարծիքները ներկայացնելու խոչընդոտների վերաբերյալ որևէ բողոք չի ներկայացվել:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ներկայացվել է ընդամենը 55 դիմում, որից 23-ը՝ դրա իրավունքը չունեցող ոչ պատշաճ սուբյեկտի կողմից:

Թվով 32 տեղամասերի վերահաշվարկի արդյունքում քվեարկության արդյունքներն էական փոփոխությունների չեն ենթարկվել: Նույն տեսակետն է արտահայտվել նաև միջազգային դիտորդական առաքելության զեկույցում:

«Վերահաշվարկների արդյունքները ընդհանուր առմամբ չէին տարբերվում նախնական արդյունքներից:...»:

Ընտրությունների արդյունքների բողոքարկման մասին

Մեզանում վատ ավանդույթ է դարձել քաղաքական խնդիրներն իրավական հարթություն տեղափոխելն ու իրավական գործընթացները քաղաքականացնելը:

Ընտրական բարի ավանդույթների պակասի, ինչպես նաև ընտրական գործընթացներում սեփական սխալներն ընդունելու ու գնահատելու համարձակություն չունենալու պատճառով համամասնական ընտրակարգով ընտրությունների և մեկ մեծամասնական ընտրատարածքում ընտրությունների արդյունքների վերաբերյալ դիմումներ են ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան:

Ընտրություններն անվավեր ճանաչելու ընթացակարգերի նկատմամբ մակերեսային վերաբերմունքը և սահմանադրական դատարան դիմելն ընտրական գործընթացի հերթական փուլ դիտելը, իրավական, քաղաքական մշակույթի հերթական բացն է:

Ժողովրդավարական ընտրությունները ենթադրում են նաև պարտությունն արժանապատվորեն ընդունելու կարողություն:

Ընտրական հանձնաժողովների կամ ընտրական գործընթացներում ընդգրկված տարբեր սուբյեկտների կողմից առանձին ընտրական պրոցեսների խախտումը չի կարող դիտարկվել որպես ընտրությունների արդյունքների բողոքարկման հիմք:

Պատկերավոր ասած՝ ընտրությունների անցկացումը չի կարող դիտարկվել որպես անցում ականապատ դաշտով, որտեղ յուրաքանչյուր սխալ քայլ կամ շեղում կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների, այս դեպքում՝ ընտրությունների անվավերության:

Ընտրությունների արդյունքները բազմաթիվ ընտրողների սուբյեկտիվ ընտրական իրավունքի իրականացման արդյունք են: Յուրաքանչյուր ընտրողի ազատ կամաարտահայտություն արժեք է: Սակայն մեկ կամ մի քանի, նույնիսկ մի քանի հարյուր ընտրողի ընտրական իրավունքի խախտումը, որը հաստատվել է սահմանված կարգով, ինքնին չի կարող հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար, քանզի հակառակ պարագայում կոտնահարվի ընտրված թեկնածուի, կուսակցության կամ նրան կողմ քվեարկած հարյուր հազարավոր ընտրողների ընտրական իրավունքը, կխեղաթյուրվի ու կիմաստագրվի ընտրությունների ինստիտուտն ընդհանրապես:

Ընտրությունների մասնակից առանձին թեկնածուների շահերի բախումը՝ պայմանավորված նրանց քաղաքական նախապատվություններով, չի կարող առաջացնել անհաղթահարելի խոչընդոտներ ընտրողների կամաարտահայտության հիման վրա իշխանության մարմինների ձևավորման համար:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև այս հանգամանքները հաշվի առնելով և ելնելով կոնկրետ փաստերից՝ երկու դեպքում էլ համապատասխան հանձնաժողովների որոշումներն ընտրությունների արդյունքների մասին թողել է անփոփոխ:

Օրենսգրքի խախտումների և խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ ձեռնարկված միջոցառումների մասին

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից թիվ 15/16, 14/55 և 14/70 ընտրական տեղամասերում հայտնաբերված խախտումների վերաբերյալ նյութերն

ուղարկվել են ՀՀ դատախազություն: ՀՀ դատախազություն է ներկայացվել նաև 6 հաղորդում ստացված դիմումների վերաբերյալ:

Դատարաններում ընտրական վեճերով մուտքագրվել, քննվել և ավարտվել են 146 քաղաքացիական գործ, որից 80-ը վերաբերել է ընտրողների ցուցակներում ընդգրկվելուն: 80 դիմումն էլ բավարարվել է, իսկ դիմողներն ընդգրկվել են ընտրողների լրացուցիչ ցուցակներում:

Մնացած 66 գործի վերաբերյալ.

4 գործով դիմումներ են ներկայացվել դատարաններ՝ ԸԸՀ-ի որոշումներն անվավեր ճանաչելու և պատգամավորության թեկնածուի /թեկնածուների/ գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: Մեկ գործով դիմումը բավարարվել է մասնակի, մեկով՝ ամբողջությամբ, 2 գործով դիմումները մերժվել են, 10 գործով դիմումներ են ներկայացվել դատարաններ՝ պետական մարմնի /պաշտոնատար անձի/ օրենքին հակասող /սպօրինի/ ակտը /գործողությունը/ վիճարկելու մասին պահանջով: Մեկ գործով դիմումը բավարարվել է, յոթով՝ դիմումները մերժվել են, 2 գործով որոշում է կայացվել դիմումի ընդունումը մերժելու մասին: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վերացրել է դիմումի ընդունումը մերժելու մասին որոշումները, որից հետո Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը դիմումներն ընդունել է վարույթ, մեկ գործով վերջնական արդյունքում վճիռ է կայացվել գործի վարույթը կարճելու մասին, մեկ գործով դիմում է ներկայացվել դատարան՝ ՀՀ ռստիկանության կողմից «ՀՀ մշտական բնակիչ լինելու մասին ձև 2» տեղեկանք տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով: Դիմումը մերժվել է:

Մեկ գործով դիմում է ներկայացվել դատարան՝ ԸԸՀ-ի որոշումն անվավեր ճանաչելու և պատգամավորության թեկնածու գրանցվելու պահանջով: Դիմումը մերժվել է, 44 գործով դիմումներ են ներկայացվել ընդդեմ ԿԸՀ-ի՝ պետական մարմնի օրենքին հակասող անգործությունը վիճարկելու պահանջներով: Դրանցից 39-ը մերժվել են, մեկ գործով որոշում է կայացվել դիմումի ընդունումը մերժելու մասին, որը բողոքարկվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան, 4 գործով որոշում է կայացվել դիմումը վերադարձնելու մասին, որից 3-ը բողոքարկվել են ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 2 գործով բողոքը բավարարել է և վերացրել դիմումը վերադարձնելու մասին որոշումը, 5 գործով դիմումներ են ներկայացվել դատարաններ տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի մասին: Հինգ գործով էլ որոշում է կայացվել դիմումի ընդունումը մերժելու մասին, մեկ գործով դիմում է ներկայացվել դատարան քարոզչություն կատարելու իրավունքին արգելք հանդիսանալու վարչական

իրավախախտման վերաբերյալ: Որոշում է կայացվել վարչական տուգանք նշանակելու մասին՝ 200.000 դրամի չափով:

Առաջին ատյանի դատարաններն ընտրությունների հետ կապված հանցագործությունների վերաբերյալ քննել են 3 քրեական գործ, դատապարտվել են 12 անձինք:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մայիսի 6-ի թիվ 1-86 դատավճռով թիվ 15/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ա. Էլոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով /ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը/ և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման 1 տարի 6 ամիս ժամանակով և կալանքի է վերցվել դատարանի դահլիճում:

Նույն հանձնաժողովի քարտուղար Գ. Գիրգորյանը ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամանակով. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2 տարի ժամանակով:

Քաղ. Բ. Մելքոնյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-154² հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամանակով. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 1 տարի ժամանակով, այն բանի համար, որ Ա.Ալեքսանյանից վերցրած գումարը բաժանել է շենքի բնակիչներին՝ համոզելով, որ վերջիններս կողմ քվեարկեն Ա. Ալեքսանյանի նախընտրած թեկնածուի օգտին՝ դրանով իսկ օժանդակելով ընտրողների կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռով թիվ 14/55 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ջ. Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով /ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը/ և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել է ազատազրկման մեկ տարի ժամանակով և կալանքի վերցվել:

Վերջաբանի փոխարեն

ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի մայիսի 12-ի ընտրությունների ժամանակ, առաջին անգամ՝

ընտրողների ցուցակներն ըստ տեղամասերի կազմվել է Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա, իսկ ԿԸՀ ինտերնետային կայքում ցուցակները տեղադրվել են նաև ըստ ընտրական տեղամասերի՝ բաց համընդհանուր ծանոթացման համար.

քվեարկության օրն ընտրողներն իրենց քվեարկելու իրավունքը վերականգնել են նաև լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման տեղեկանքի հիման վրա, այսինքն առաձին անճշտությունների պարագայում ընտրողը ստիպված չի եղել դիմելու բացառապես դատական պաշտպանության: Նման իրավունքից օգտվել է ընդամենը 1906 քաղաքացի կամ ընտրողների ընդհանուր թվի 0,082%, որոնցից 1826-ը՝ անձնագրային բաժանմունքների միջոցով և միայն 80-ը, կամ որ նույն է՝ ընտրողների 0,003%-ը, դատական կարգով.

տեղամասային ընտրական հանձնաժողովների բոլոր 17.307 անդամներն անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որոկավորման վկայականներ.

իրենց ընտրական իրավունքն են իրականացրել բուժհաստատություններում ստացիոնար բուժում անցնող քաղաքացիները՝ շրջիկ արկղերի միջոցով, որոնց կիրառության վերաբերյալ որևէ բողոք չի ներկայացվել.

տեսողության հետ կապված քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քաղաքացիներն ստացել են հնարավորություն քվեարկելու ինքնուրույն՝ հատուկ այդ նպատակով պատրաստված կաղապարների օգնությամբ.

քվեարկությունը կազմակերպվել է քվեարկության ծրարներով (մեծացել է քվեարկության գաղտնիության ապահովումը) և համարակալված ելունդներ ունեցող քվեաթերթիկներով.

համամասնական և մեծամասնական ընտրակարգերով քվեարկությունների համար օգտագործվել են առանձին քվեատուփեր.

քվեախցիկների տեղադրման համար սահմանվել են պայմաններ, նախատեսվել է արգելափակիչ ժապավեն, որը բացառել է վերահսկողությունն ընտրողի կամքի ազատ արտահատման վրա.

քվեաթերթիկների ստացումը հավաստվել է ընտրողի և հանձնաժողովի անդամի ստորագրություններով, ինչը նպաստել է վերահսկողության բարձրացմանը.

զինծառայողների քվեարկության ժամանակ զինծառայողների անձը հաստատող զինվորական գրքույկներում դրվել են համապատասխան դրոշմակնիքներ.

օգտագործվել են մեկանգամյա օգտագործման պարկեր՝

- ՏԸՀ կնիքների համար,

- ընտրական տեղամասերից ընտրական փաստաթղթերը ԸԸՀ-ներ ներկայացնելու համար,

- քվեարկությունից հետո «Հայինկասացիա» ընկերության միջոցով ՏԸՀ-ների կնիքները և տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների օրինակները ԿԸՀ տեղափոխելու համար.

բոլոր 1923 տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները 24 ժամվա ընթացքում վերադարձվել են ԿԸՀ.

համամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներն ամփոփվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրությունների հիման վրա՝ ըստ տեղամասերի աղյուսակավորման միջոցով՝ «Ընտրությունների ավտոմատացված համակարգ» ծրագրի, և ԿԸՀ-ի ու ԸԸՀ-ների միջև գործող համակարգչային ցանցի օգնությամբ, ինչի շնորհիվ հնարավոր եղավ քվեարկության ավարտից հետո երեքժամյա պարբերականությամբ ապահովել քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ տեղամասերի: Բոլոր ԸԸՀ-ներում և ԿԸՀ-ում աղյուսակավորման արդյունքները եղել են հրապարակային, փակցված բոլորի համար տեսանելի տեղում:

Առաջին անգամ վստահված անձինք հնարավորություն են ունեցել անարգել տեղաշարժվել տեղամասային կենտրոնում, ներկա գտնվել գործառույթ իրականացնող հանձնաժողովի ցանկացած անդամի կողքին, պահանջել ստուգելու ընտրողի անձնագիրը և վերահսկել նրա գործողությունները, անարգել ծանոթանալ քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին: Այս կապակցությամբ ևս որևէ բողոք չի ներկայացվել:

Առաջին անգամ վստահված անձինք, դիտորդները հնարավորություն են ունեցել անարգել տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման նիստը, իսկ մի քանի հեռուստաընկերություններ ուղիղ եթերի ռեժիմով հեռարձակել են անգամ տեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Առաջին անգամ ընտրական գործընթացների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը՝ ԿԸՀ որոշումները, կուսակցությունների ընտրական ցուցակները, մեծամասնական ընտրակարգով առաջադրված և գրանցված պատգամավորության թեկնածուների տվյալները, տեղամասային կենտրոնները և դրանց գտնվելու վայրերը, դիմումները և դրանց տրված պատասխանները, քվեարկության արդյունքների աղյուսակավորումը՝ ըստ տեղամասերի, ինչպես նաև ընտրական գործընթացի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն զետեղվել է ԿԸՀ ինտերնետային կայքում:

Ընտրությունների ողջ ընթացքում ապահովվել է աննախադեպ հրապարակայնություն և թափանցիկություն:

2007 թվականի մայիսի 12-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ներգրավված են եղել ընտրական հանձնաժողովների 17.685 անդամ, 22 կուսակցության և կուսակցությունների մեկ դաշինքի, ընդհանուր առմամբ, 40.766 վստահված անձինք (չհաշված մեծամասնական ընտրակարգով ընտրություններում ներգրավված

թեկնածուների վստահված անձանց), ավելի քան 14.000 դիտորդ՝ վեց միջազգային և 54 տեղական կազմակերպությունից, և 1.391.540 ընտրող:

1923 տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններից 1823-ը ստորագրել են ՏԸՀ-ների յոթ և ավել անդամ, կամ արձանագրությունների 95,16%-ը: Արձանագրությունների 63%-ը ստորագրել են հանձնաժողովի բոլոր 9 անդամները, 86%-ը՝ 8 և ավելի անդամ: Բերվածից հետևում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում մաս ընդդիմադիր կուսակցությունների կողմից առաջադրված հանձնաժողովի անդամները, որպես կանոն, ստորագրել են արձանագրությունները:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007թ. մայիսի 12-ի հերթական ընտրությունները որակական առումով էական առաջընթաց էին նախընթաց տարիներին անցկացված ընտրությունների նկատմամբ: Այդ են վկայում ինչպես այս ընտրությունների նկատմամբ հասարակական հավաքական ընկալումը, այնպես էլ միջազգային դիտորդական առաքելությունների գնահատականները:

Մի քանի մեջբերում ԵԽԽՎ-ի դիտորդական առաքելության 20.06.2007թ. զեկույցից (փաստ. թիվ 11312).

«Մամուլի գործողությունները նույնպես ողջունելի են. ընտրարշավի ընթացքում կուսակցություններին հավասար չափով տրամադրվեց անվճար հեռուստատեքեր և անաչառ լուսաբանում:...»,

«2007թ.-ի մայիսի 12-ի ՀՀ-ում անցկացված խորհրդարանական ընտրությունները գերազանցապես համապատասխանում էին միջազգային ժողովրդավարական չափանիշերին՝ չնայած որոշ թերություններ այնուհանդերձ գրանցվել են: Հայաստանի իշխանությունները, ինչպես մաս ալ ընտրական մարմինները, կամք ցուցաբերեցին նախկինում թույլ տված սխալներն ուղղելու և այս ընտրությունների անցկացման մակարդակը բարելավելու ուղղությամբ:...»:

Միաժամանակ արձանագրվել է, որ «...Ցավոք սրտի, ձայների վերջնահաշվարկի և արդյունքների աղյուսակավորման ընթացքում նկատված որոշ լուրջ խախտումներ և թերություններ ստվեր են գցում նախնական դրական գնահատականի վրա:»:

Վերջին պարբերության այս գնահատականից նույնպես կարելի էր խուսափել, եթե օրենսգրքի փոփոխությունների ժամանակ հաշվի առնվեր, որ քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ ամրագրվող կարգը շատ բարդ է, ներառում է մի շարք ավելորդություններ և այդ գործառույթները կանոնակարգող նորմերը կիրառելիս առաջ են գալու լրացուցիչ դժվարություններ: Այդ մասին նշվել է մաս դիտորդական առաքելության զեկույցում.

«Շատ ընտրատեղամասերում ձայների հաշվարկը ձգձգվեց նաև այն պատճառով, որ օրենքով դրա համար սահմանված գործընթացը բավականին բարդ է»:

Հատկապես այս հարցի պարզեցմանը պետք է ուղղված լինեն հանձնաժողովի առաջարկներն օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, իսկ ընտրական վարչարարությունն ավելի արդյունավետ դարձնելու համար հանձնաժողովն անելիքներ ունի ընտրական հանձնաժողովներում ընդգրկվել ցանկացողների ուսուցման որակը բարելավելու և արդեն հանձնաժողովներում ընդգրկված քաղաքացիների համար լրացուցիչ ուսուցողական դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

Տեղին է մեջբերել նաև Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի պատվիրակության ղեկավար պրն Լեո Պլատվոյետի եզրափակիչ խոսքից մեկ հատված՝

«Մենք շնորհավորում ենք հայ ազգին ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու կամք ցուցաբերելու կապակցությամբ: Չնայած որոշ հարցեր հետագա շտկման կարիք ունեն՝ Եվրախորհուրդը և նրա վեհաժողովը միշտ պատրաստ են գործակցության՝ դրանց ուղղությամբ»:

Հետագա գործակցության, ընտրական համակարգի բարեփոխմանն ուղղված ցանկացած հարցի քննարկման համար պատրաստակամ է նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ընտրություններին ակտիվ մասնակցության համար, զանգվածային լրատվության միջոցներին՝ ընտրությունների լուսաբանումն ապահովելու և առանձին հեռուստաընկերությունների՝ հատկապես քվեարկության արդյունքների ամփոփումն ուղիղ եթերով հեռարձակելու համար, միջազգային և տեղական տարբեր կազմակերպություններին՝ իրականացրած ծրագրերի և ընտրական համակարգին ցուցաբերած աջակցության համար, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ հատկապես ընտրողների ցուցակների կազմման և ընտրությունների ընթացքում հասարակական կարգի պահպանումն ապահովելու համար, մյուս պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ընտրական հանձնաժողովներին աջակցելու համար, միջազգային դիտորդական առաքելություններին՝ ընտրությունների դիտարկման համար, ընտրություններին մասնակից թեկնածուներին, ընտրական հանձնաժողովների անդամներին ու կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցներին:

* Մեջբերումների թարգմանությունն անգլերենից ոչ պաշտոնական է: